Զ. ՖԱՆՅԱՆ

(Պատմական գիտությունների թեկնածու)

ՄԻ ԷՋ ՄԵՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Թերթելով արխիվային նյութերը

Մոլդովայի Հանրապետության Ազգային արխիվում տարբեր ֆոնդերի գործերում կուտակվել են ոչ քիչ թվով ժամանակից գունաթափված փաստաթղթեր, որոնք լույս են սփռում Դունայ-Դնեստրի միջագետքի հայերի պատմության վրա և վկայում են, մասնավորապես, հայ-մոլդովական վաղեմի եղբայրական կապերի մասին: Ես թերթում ու կարդում եմ դրանք առանձնակի հուզմունքով, մեր նախնիների հանդեպ հպարտության և հարգանքի զգացումով: Ընթերցողի ուշադրությանն եմ ներկայացնում այդ բազմադարյան պատմության էջերից մեկը:

... Մոլդովայի և Վալախիայի հողերում թնդում էր երրորդ ռուս-թուրքական պատերազմը, որը, ինչպես վկայում են փաստաթղթերը, բռնկվել էր օսմանյան կայսրության նախաձեռնությամբ, քանի որ նա վճռել էր վրեժ լուծել 1787—1791 թթ. պատերազմում պարտության համար: Դունայի ռուսական բանակը գեներալ-ֆելդմարշալ Ա. Ա. Պրոզորովսկու գլխավոր հրամանատարությամբ (որը այդ պաշտոնում փոխարինել էր Ի. Ի. Միխելսոնին), վճռական հարձակում ծավալեց թուրքերի դիրքերի վրա, նրանց դեպի հարավ-արևմուտք՝ դեպի Դունայ մղելով: Ռուսական զորքի հետ միասին օսմանյան զորքերի դեմ հերոսաբար մարտնչում էին Մոլդովայի և Վալախիայի կամավորները: Իսկ նրանց հետ ուս-ուսի կռվում էին և հայերը, որոնք հնուց այստեղ գտել էին իրենց ապաստանն ու երկրորդ հայրենիքը: Ենիչերների դեմ մարտական գործողություններին մասնակցում էր նաև հայ-կամավորների առանձին ջոկատը, հարավային Բեսարաբիայում ծնված Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի հրամանատարությամբ, որը դրա համար արժանացել էր ռուսաստանյան մարտական շքանշանի: Ջոկատը կազմելու և այն սննդամթերքով ու ռազմական հանդերձանքով ապահովելու գործում մեծ ջանք ներդրեց Մանուկ-Բեկ Միրզոյանը, որն ընդհանրապես նշանավոր դեր խաղաց Մոլդովան և Վալախիան օսմանյան զորքերի կողոպուտից ու ավերումից պաշտպանելու գործում:

Պատերազմի բոցում ընկնում էին նաև խաղաղ մարդիկ ու նրանց ունեցվածքը: Գազանացած ենիչերները չէին խնայում ոչ ոքի և ոչինչ: Ետ գլորվելով զորքերի և տեղի բնակչության կամավոր կազմավորումների հարվածներից, նրանք այրում ու ավերում էին եկեղեցիները, վանքերը, բնակելի տները, կողոպտում ողջ թանկարժեք ունեցվածքը, կոտորում քրիստոնյաներին, շատերին քշում ստրկական գերության: Պե՞տք է, արդյոք, նշել, որ այդ իրադրությունում ամենաանպաշտպանը հայերն էին: Նրանց վիճակը սաստկանում էր կառավարման համակարգի քայքայմամբ, երկրամասում հայրենակիցների կյանքն ու շահերը ինչ-որ չափով պաշտպանող կենտրոնացված եկեղեցական իշխանության բացակայությամբ:

Արդեն պատերազմի սկզբում Մոլդովայի և Վալախիայի հայկական համայնքի հեղինակավոր ներկայացուցիչները դիմեցին ռուսական Դունայի բանակի գլխավոր հրամանատարին՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանին՝ երկրամասի հայերի առաջնորդ հաստատելու խնդրանքով, սրբազանը հայտնի էր իրենց որպես պաշտպան դեռ 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմից ու վայելում էր մեծ հեղինակություն և, որ ամենակարևորն է ռազմական, քաղաքացիական և հոգևոր իշխանությունների վստահությունը: Բայց ռազմական գործողությունների շրջապտույտում այդ հարցին անմիջապես ուշադրություն չդարձվեց:

Հարցի քննման արագացման խթան հանդիսացավ Քիշնևի հայկական եկեղեցու սպասավորների Գրիգորիոպոլի վարդապետ Մանուելի միջև տեղի ունեցած միջադեպը: Վերջինս դիմեց գեներալ-ֆելդմարշալ Պրոզորովսկուն մի խնդրանքով, որում գրում էր, որ Հայկական եկեղեցու անձնակազմը իրեն որպես թեմի առաջնորդի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի նվիրակի պատշաճ պատիվ չմատուցեց և իր իշխանությանը անհնազանդություն ցուցաբերեց: Ընդ որում միջադեպի հրահրողը եկեղեցու երեցփոխն էր, որին նա դրա համար պաշտոնից հեռացրեց և նրա փոխարեն նշանակեց Գրիգորիոպոլից իրեն մոտ մի անձնավորության: Այնուհետև Մանուելը գրում էր, որ իր կարգադրությունը հրաժարվել են կատարել, այդ պատճառով նա խնդրում է գլխավոր հրամանատարին այդ գործում իր իշխանությունը գործադրել:

Պրոզորովսկին կարգադրեց Մանուելի խնդրագիրը եզրակացության հանձնել Մոլդովո-Վալախյան Էկզարխ միտրոպոլիտ Գավրիլ Բենուլեսկու-Բոդոնիին՝ մարզի բարձր հեղինակություն ունեցող եկեղեցական և հասարակական գործիչին:

Միտրոպոլիտն ամենայն ուշադրությամբ քննության ենթարկեց խընդրագիրն ու մի ծավալուն պատասխան գրեց, թվագրած՝ 1809 թ. մարտի 6:

«Մոլդովայում, Վալախիայում և Բեսարաբիայում բնակվող հայերը,— ասված է Բենուլեսկու-Բոդոնիի պատասխանում,—այս երկրների Թուրքիայի տիրապետության տակ գտնվելու ժամանակաշրջանում եկեղեցական գծով ենթարկվում էին Կոստանդնապոլսի հայոց պատրիարքին...»: 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ «Նորին Կայսերական մեծություն, երանելի հիշողության տիրուհի Եկատերինա Երկրորդի» կարգադրությամբ Մոլդովայի, Վալախիայի և Բեսարաբիայի հայկական եկեղեցիները վերաենթարկված էին «Ռուսաստանում բնակվող Ամենայն Հայոց Հայրապետին»՝ Աստրախան քաղաքում գտնվող առաջնորդության: 1791 թ. Յասիի հաշտության պայմանագրի կնքումից հետո այստեղի հայկական հոտը նորից անցավ Կոստանդնապոլսի Պատրիարքի կառավարման ոլորտը:

«Ինքնըստինքյան հասկանալի է,—ասվում է ապա փաստաթղթում,— որ ներկա պարագաներում էլ հայկական հովվապետի, և մանավանդ եպիսկոպոսի ու նրա պատվիրակների իշխանությունը այստեղի հայկական եկեղեցու վրա կարող է տարածվել Նորին պայծառափայլություն բանակի գլխավոր հրամանատար գեներալ-ֆելդմարշալ և կավալեր, իշխան Ալեքսանդր Պրոզորովսկու առաջադրումով կամ, ծայրահեղ դեպքում, Նորին պայծառափայլության թույլտվությամբ»:

Վերջում միտրոպոլիտ Գավրիիլն առաջարկում է արքեպիսկոպոս Մանուելի խնդրագիր-բողոքը թողնել անհետևանք, որպես սնանկ: Հետո նշելով, որ իրեն հայտնի են Մոլդովայի և Վալախիայի հայերի խնդրանքները Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանին իրենց առաջնորդ նշանակելու մասին, գրում է. «Իմ կարծիքով, եթե Նորին պայծառափայլությանը ցանկալի լիներ ներկայացնել նշված արքեպիսկոպոս Գրիգորին, որն ապրում է թոշակով առանց թեմի, և որը բավականին ընդունակ է կառավարման և պետական շահերը պաշտպանելու, քանզի Ռուսաստանում դաստիարակություն ստանալով՝ հուսալի է և ռուսական գիրն ու լեզուն գիտի, Մոլդովայում, Վալախիայում և Բեսարաբիայում գտնվող հայկական եկեղեցիների թեմի առաջնորդ նշանակելու, հայերն էլ իրենց առաջնորդին հաստատապես իմանալով՝ հանգիստ կլինեին...»:

Իշխան Պրոզորովսկին համաձայնվեց միտրոպոլիտ Գավրիիլի կարծիքի հետ և կայսր Ալեքսանդր Առաջինի անունով համապատասխան ներկայացում արեց:

Եվ շուտով դրան հետևեց Յասի քաղաքում ամբիոնով Մոլդովայի, Վալախիայի և Բեսարաբիայի հատուկ հայկական թեմի ստեղծման և արքեպիսկոպոս Գրիգորին առաջնորդ նշանակելու կարգադրությունը: Թեմի ղեկավարման համար առանձնացվեց տարեկան 7,3 հազար մոլդովական լև, այդ թվում 4700 լև ապարատի՝ արքեպիսկոպոսի, ավագ երեցի, քահանայի, երկու սարկավագների, երկու երգիչների, գրագրի և տնտեսական ապասավորների ոռճիկների ֆոնդին:

1809 թ. հունիսի 17-ին Գրիգոր արքեպիսկոպոսը ժամանեց Յասի քաղաք և ստանձնեց թեմի առաջնորդի պարտականությունները, ինչի մասին նա նույն թվականի հունիսի 20-ի նամակով հայտնեց մարզի քաղաքացիական պետ սենատոր Ս. Ս. Կուշինիկովին: Յասի քաղաքում Գրիգորին ջերմորեն ընդունեց միտրոպոլիտ Գավրիիլը, այնպես էլ տեղի հայ հոգևորականությունը: Առաջ ընկնելով նշենք, որ Գավրիիլ Բենուլեսկու-Բոդոնին մինչև իր կյանքի վերջը (1821 թ.) սերտ ընկերակցական հարաբերություններ էր պահպանում Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի հետ, ամեն տեսակ աջակցելով հայկական թեմի կազմակերպման ու բարեկարգման ճիգերում:

Իսկ ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ թեմը իր ձևավորման ամենասկզբում: Համաձայն 1809 թ. հոկտեմբերին կազմած հայկական եկեղեցիների ու նրանց ծխականների հաշվառման «Յուցակի», Մոլդովայի, Վալախիայի և Բեսարաբիայի տերիտորիայում այդ ժամանակաշրջանում գործում էին 15 հայկական եկեղեցիներ 107 հոգևոր սպասավորներով և հայ լուսավորչական դավանությամբ ծխականների 1160 ընտանիքներով: Թվով ամենամեծ համայնքները գտնվում էին Բոտոշանի (328 ընտանիք), Ռոմանի (145 ընտանիք), Ֆոկշանի (121 ընտանիք), Ակերմանի (116 ընտանիք), Քիշնևի (113 ընտանիք), Յասի (103 ընտանիք), Բուխարեստի (90 ընտանիք) մեջ:

Եվ դա այն բանից հետո, երբ 1791 թ. Դնեստրի ու Պրուտի աջ ափից տեղափոխվել ու Գրիգորիոպոլում գաղութ էին կազմել 820 ընտանիք:

Իր կառավարման առաջին իսկ օրերից Գրիգոր արքեպիսկոպոսը սերտ կապեր հաստատեց մարզի հոգևոր իշխանությունների, քաղաքացիական ու ռազմական հրամանատարության հետ և նրանց աջակցությամբ հայկական համայնքի պաշտպանության, թեմի կազմակերպման ու բարեկարգման հիրավի անձնվիրական գործունեություն ծավալեց:

Բազմակողմանի զարգացած, հիանալի կազմակերպիչ, նա ռազմաճակատի թիկունքի բարդ պայմաններում արագ յուրացրեց գործերի վիճակը: Այդ կապակցությամբ ավելորդ չէ նշել, որ մարզի վերը հիշատակված ամենազոր քաղաքացիական պետի կարգադրությամբ, ոչ մի վարչական կամ դատական մարմին չէր կարող պատասխանատվության ենթարկել ազգությամբ հայ անձանց՝ առանց հայոց առաջնորդի գիտության և համաձայնության:

Պատերազմի ավարտից հետո, 1812 թ. ռուս-թուրքական խաղաղ պայմանագրի համաձայն, Ռուսաստանյան կայսրության պետական սահմանն անցավ Պրուտ գետով, կազմավորվեց Բեսարաբիայի մարզը (1879 թվականից՝ նահանգը), Քիշնև կենտրոնով. հայկական թեմի նստավայրը Յասից տեղափոխվեց Քիշնև, իսկ ինքը թեմը սկսեց կոչվել Բեսարաբիայի (1828-ից՝ Նախիջևանի և Բեսարաբիայի): Այստեղ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը նոր խանդավառությամբ շարունակեց հայկական թեմի կազմակերպումը և ամրապնդեց ծխականների ազգային-հայրենասիրական համերաշխությունը:

1814 թ. Բեսարաբիայի մարզային վարչության միջնորդությամբ ցարական կառավարությունը որոշում ընդունեց Բեսարաբիայի հայկական թեմի հետագա բարեկարգման միջոցների մասին: Քիշնևում հողատարածություն հատկացվեց (ներկայումս՝ Ստեֆան զել Մարեի պողոտայի և Բենդերի, Օգոստոսի 31-ի ու Արմյանսկայա փողոցների միջև ընկած թաղամասերը) հայոց առաջնորդարան կառուցելու համար. պետական գանձարանից տրամադրվեց 4000 լև: Քիշնևի հին հայկական եկեղեցին, որ հիմա էլ գոյություն ունի, վերանորոգման ու վերակառուցման ենթարկվեց, դառնալով Մայր եկեղեցի, Ստարոարմյանսկայա փողոցի կողքին հայտնվեց նաև Նովայա Արմյանսկայա փողոցը (երկուսն էլ այժմ գոյություն ունեն):

Զգալիորեն աճեցին թեմի կառավարման ծախսերի հատկացումները: Ակերմանի գավառում առանձնացվեց 2000 դեսյատին վարելահող և մի քանի խաղողի մրգատու այգիներ, ինչպես նաև Դնեստր գետի վրա մի հատված ձկնորսության համար:

Երիտասարդ Ա. Ս. Պուշկինի Քիշնև գալու ժամանակ հայոց առաջնորդարանը արդեն մարզում բավականին լայն համբավ ուներ: Այստեղ լավ կահավորված ընդարձակ շենքում կազմակերպվում էին ազատամիտ ընտրախավի ներկայացուցիչների մտերմիկ հանդիպումներ: Հանդիպումներին տարբեր ժամանակ լինում էին Մանում-Բեկը, Հարություն Ալամդարյանը, գեներալ Ինզովը, միտրոպոլիտ Գավրիիլը, հույն ազատագրական շարժման առաջնորդ Ալեքսանդր Իպսիլանտին:

Հայոց առաջնորդարանում լինում էր նաև Ա. Ս. Պուշկինը, ինչի մասին վկայում է նրա օրագրում արված 1821 թ. հուլիսի 18-ի գրառումը: Պոետին ուղեկցում էր Արտեմ Խուդաբաշևը, որը նույնքան սրամիտ էր, որքան տան տերը՝ Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանը: Հենց նրանցից է Պուշկինը լսել

Գաբրիել հրեշտակապետի ու կույս Մարիամի մասին հին ավանդությունը, որի այուժեով ստեղծել է «Գավրիիլիադա» պոեմը:

Անընդգրկելիորեն լայն էին Գրիգոր արքեպիսկոպոս Զաքարյանի հետաքրքրությունները: Լինելով հայրենասեր, նա անընդհատ մտածում էր իր ժողովրդի ճակատագրի մասին և ոչինչ չէր խնայում նրան օտարերկրյա ստրկացնողների լծից ազատելու համար: Մշտական կապ էր պահպանում Էջմիածնի կաթողիկոսարանի հետ, թեմի սուղ միջոցներից զգալի գումարներ էր տրամադրում Մայր Աթոռի կարիքներին, նամակագրական կապի մեջ էր գրեթե բոլոր հայկական մշակույթի օջախների հետ:

Դժբախտաբար, Զաքարյանի նամակների բավական մեծ ժառանգությունից քիչ բան է լույս տեսել: Հայկական պարբերական մամուլում հրատարակվել են 1821—1822 թթ. մի քանի նամակներ Քիշնևից՝ ուղղված այն ժամանակի նշանավոր եկեղեցական և հասարակական գործիչներ՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Եփրեմին, Պետերբուրգի ազդեցիկ պաշտոնյա Հովակիմ Լազարևին, Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Ներսես Աշտարակեցուն, Ռուսաստանի թեմական առաջնորդ Հովհաննես Գառնակերյանին և այլոց:

Քիշնևի արքեպիսկոպոս Գրիգորի նամակներում երևում է բարձր բարոյականության տեր մարդ, բազմակողմանի քաղաքական ինտելեկտով ու խորաթափանց մտքով: Այդ նամակներում հեղինակը փաստաթղթային ստույգությամբ ու անկեղծ համակրանքով նկարագրում է հույների, մոլդովացիների, վլախացիների, սերբերի և հարավ-արևելյան Եվրոպայի ու Բալկանների այլ ժողովուրդների քաջարի պայքարը օսմանյան ստրկության դեմ, զայրույթով բացահայտում է թուրք պատժիչների բարբարոսության ու դաժանության աստիճանը այդ ժողովուրդների նկատմամբ:

Ընդ որում, նա հստակորեն հասկանում է, որ Սև ծովի հյուսիս-արևմուտքի երկրներում հակաթուրքական շարժումը, որին մասնակցում էին նաև ոչ քիչ թվով հայեր, նպաստում էր սուլթանական Թուրքիայի ռազմական հզորության փլուզմանը, մայր հայրենիքի վերածնունդի արագացման հույս ներշնչելով:

Զաքարյանի բուռն բազմակողմանի գործունեությունն իր մեջ քաջողական ուժ ուներ: Բեսարաբիայի մարզի կազմավորումից հետո առաջին տասնամյակի ընթացքում նրա տարածքում առաջացան հայկական նոր գաղթօջախներ (օրինակ՝ Խնչեղտի Մանուկ-Բեյի գլխավորությամբ), թվով աճեցին արդեն եղածները, հատկապես հայկական համայնքը Քիշնևում: Այստեղ բարենպաստ պայմաններ ստեղծվեցին ծխական դպրոց, հանրային գրադարան, անկելանոց բացելու, թեմի նյութական հիմքը զգալիորեն ամրապնդելու համար:

Հայկական թեմի դիմումով, որին օժանդակեց Գավրիիլ միտրոպոլիտը, Քիշնևի գեղատեսիլ ծայրամասերից մեկում, որը կոչվում էր «Վարդերի հովիտ», հատկացվեց առանձին հողատարածություն հայկական գերեզմանոցի համար, որ հիմա էլ կա (Ազովսկայա փող. 11): Հետագայում, արդեն խորհրդային շրջանում, այն միացվեց լեհական գերեզմանոցին:

20-ական թվականների կեսերին Զաքարյանի առողջությունը վատացավ, անցած պատերազմում կրած վերքը սկսեց անհանգստացնել: 1825 թ. ապրիլի 20-ին նա սեփական ձեռքով կազմեց հոգևոր կտակը «Քիշնևից բարձրագույն հրամանագրով կովկասյան բուժիչ ջրերի մոտ մեկնելու կապակցությամբ»: Առաջին կետում գրված է, որ եթե ինքը մահանա Քիշնևում, իրեն թաղեն նոր հայկական գերեզմանոցում և գերեզմանի վրա մատուռ կառու-

ցեն, «որտեղ կարելի լիներ երբեմն ժամերգություն կատարել»: Մյուս կետում կտակված է. «Եթե բոլոր ծախսերից հետո գումար մնա, խնդրում եմ խանութներ կառուցել, որոնցից ստացած եկամուտը օգտագործել որբերին ու այրիներին պահելու համար...»:

Կայսր Ալեքսանդր Առաջինի մահը որոշ չափով հետաձգեց Զաքարյանի բուժման մեկնելը, նա հրավիրված էր նոր կայսրի՝ Նիկոլայ Առաջինի թագադրության արարողությանը: Թագադրության տոնակատարության ընթացքում Զաքարյանը բազմաթիվ հանդիպումներ ու զրույցներ ունեցավ, որոնց արդյունքում փոխեց իր որոշումը՝ Կովկասի փոխարեն մեկնեց «բարձրագույն բարեհաճ թույլտվությամբ ավստրիական տիրություն՝ Լեմբերգ քաղաքը» (Լվով՝ Զ. Ֆ.), որտեղ հիվանդության սրման հետևանքով 1827 թ. հուլիսի 23-ին մահացավ: Թաղված է հայկական Խաչինադար վանքի բակում, Մոլդովայի միջնադարյան մայրաքաղաք Սուչավայից ոչ հեռու:

Բայց Գրիգոր աքեպիսկոպոս Զաքարյանի կտակած մատուռը հետագայում կառուցվեց հայկական գերեզմանոցի տարածքում: Այն ստացավ «Նովոարմյանսկայա ցերկով» պաշտոնական անվանումը: